## 97. ԺԸՂԱՑԷՆ ՀԸՐՍԱՆՆԷՔԸ

*Մին չըննում մին դէր ա ինո՛ւմ, էտ դէրը մին կնգան նհըետ ա ինո՛ւմ։ Մին օր դէ՛րն էտ կնգանը վըեր տըեսնում ա, ասում ա.— Ծավըտ տանըեմ, մունք ամմըեն տըեղ շոռ ընք եկալ, մնամ ա ըհա՛ մեհետ քյինանք քյո՛հնա ճեղացը։ էքյո՛ւծ ծա՛քյը-ծիքյիլին մխըրե տեսա՛-տենա՛ յոր կօնըես, հո՛ւնց կյա՛ս, վըեր մարթ չի տըեսնա։ Տու մի ասըել, էտ վախտը տահանք վըեր խոսում ին, մին նըղարաչի տահանց անա մոտե կյողըը կացած, անչուկ ար դ-նում։*

*Տա քըշերավ-քշըրհանա նըղարան յոր ա օնում, ո՛ւրա՛նց անա ճեղի կյամ նի մննում ճըղացըեն տաշտը, ընգըեղ տապառ անում։*

*Քշըրհանան դէրը քյինա՛մ ա ճեղացը օրհնում, նրանա ետն էլ էն կնեգյն ա նի մննում։ Հա՛լա՛ սո՛ւրթ-սո՛ւրթա՛ հացըեն սուփրան քցո՛ւմ ըն, նստում մին լա՛վ օտում, ետնան դէրն ասում ա.— Ամմըեն պեն ո՛ւրա՛ն տըեղն ա, մըեզ մընամ ա ըստըեղ մին լա՛վ հըրսաննէքյ անըենքյ։ Դէրն ո՛ւրա՛ն սիրած կնգանը խոստում ա թա չէ, նըղարաչին կուպըլնըեն տո՛ւս ա օնում, ըսկըսում նըղըըեն վըեր թակըելը։ Նըղըըեն սա՛ալը վըեր տո՛ւս ա կյամ, ճեղացն օղում ա թա տահանց կըլխեն պարան կյա՛։ Դէրը նան էտ կնեգյը սուփրան թողում ըն քցած, փախճում։*

*Նըղարաչին նստում ա տահանց թողած տես-տենը մին լա՛վ*

օտում, սուփրան յոր օնում, քյինա̈մ շենը, տըեսնում դերը ժամըեն ըռաշին վըեննը կացած։ Դերին մոտանում ա, ասում.—Իմ հախըս իրեք մանեթ ա, տո̈ւս կալ տու։ Դերն ասում ա.—Քու հինչի՞տ հախը։ Նըղարաշին ասում ա.—Մըեր հըրսաննեքյը քյո̈հնա̈ ճըղացումը են ըմ ըրալ, վըեր փողըս տաս վըեչ, քյիննա̈կան ըմ լոխճինին նաղլ անըեմ։ Դերը տո̈ւս ա օնում տրան իրեք մանեթ տամ, ետնան ասում.—Տըես, քըղանա կըման վըեչ մին մարթ գյիդա վուչ…

